Սալահատտին եդեալ էր անդ զկաթարսիս պատերազմին, և կարգեալ զմի կողմն խոհանոց, որպէս յայտ է 'ի դաստաստանական գրոց, զորմէ յետոյ։

Իսկ զՊատրիարգարանն, որ յարեւմուտս տաճարին և կից, արար Թէքիյէ այլազգեաց, և կոչի Խանէ, ուր յետոյ չինեցին մենարէ, և է ցարդ 'ի ձեռս նոցա։

Այլ վասն տաճարի Ս. Յակոբայ, այսպէս պատմէ Հանն վարդապետ 'ի պատմութեան Երուսաղէմի. Երէս 89, յորմէ առեալ է և Հ. Մ. Զամչեան. Հատ. Գ. 154։ Սալահատտին կամեցաւ իւրացուցանել զՍ. Յակոբ. իսկ ազգն Հայոց որք էին անդ պաղատանս մատուցեալ առ նա աղաչանօք եւ ընծայիւք՝ խնդրեցին 'ի նմանէ չնորհել զայն ինքեանց։ Նա թէպէտ և հաճեցաւ, բայց եդ 'ի միջի զայսպիսի պայման, զի նախ հրաման ետ փակել զլուսամուտս եկեղեցւոյն քարամբք, և ապա մտեալ 'ի ներքս առանձին, ելոյց զկանթեղ Աւագ Խորանին առանց գիտելոյ ուրուք. և ելեալ անտի՝ հրամայեաց փակել և զդուռնն քարամբք, և կնքեալ զայն ասէ. ես այժմ գնամ 'ի Դամասկոս. եթէ 'ի դառնալս իմ գտից զսա՝ որպէս թողի, տաց զսա ձեզ. ապա թէ ոչ, ոչ տաց։ Իսկ Հայք զրկեալ յեկեղեցւոյ անտի՝ չինեցին առ դրան նորա խորան մի յանուն Ս. Գէորգայ, և անդ առնէին աղօթս, եւ մատուցանէին պատարագս զեօթն ամ։ Եւ 'ի լրանալ եօթն ամաց եկն անդ Սուլթանն, եւ Հայք զգացուցին նմա զխոստումն նորա, եւ նա բացեալ զեկեղեցին, ետես զի դեռ եւս վառ էր կանթեղն, և սարդի ոստայն եւս չրջապատեալ էր զնովաւ։ Զայս տեսեալ նորա՝ չնորհեաց Հայոց զեկեղեցին զայն։

Զայս աւանդութիւն Հայոց հաստատէ նաեւ Պ. Միշոտ հեղինակ արեւելեան թղթակցութեան 'ի 1187 նամակի իւրում ուր ասէ. «Ի թուականին Քրիստոսի յորում էառ Սալահատտին զքաղաքն Քրիստոսի, եկեղեցին Ս. Յարութեան միայն մնաց 'ի ձեռս քրիստոնէից. հանդիպեցաւ նաեւ այսմ պատուոյ եկեղեցի Ս. Յակոբայ. զի ոչ 'ի մըզ-

---

տոնեայ Հայք հաստատանելով զմեծ դուռնարս դրամոց Սալահատտինի գընեցին զտեբուռնական Գերեզմանն և զնորա Տաճարն»։ Սիօն ամսաթերթ. 1866. Երէս 146. և Գաղղիերէն տետրակ Գորլոյ Կոռմանէ. Երէս 25։